ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 148 - Ա **17 մարտի 2021 թ.**

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի ու 19-րդ հոդվածի դրույթներով

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի տարածքում կանխատեսվող գարնանային հեղեղումների, ջրհեղեղների, սելավների, սողանքների, վթարային կամուրջների ու հնարավոր քարաթափումների տեղամասերում սպասվող հնարավոր վտանգների նվազեցման և հետևանքների վերացման 2020 թվականի պլան-ժամանակացույցով նախատեսված ու կատարված աշխատանքներն ուսումնասիրելու համար ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով՝

Հարությունյան Վանիկ	- մարզպետարանի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ, հանձնաժողովի նախագահ
Զոհրաբյան Արմեն	- մարզպետարանի քաղաքաշինության վարչության պետ
Պետրոսյան Մարտին	- մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետի պարտականությունները կատարող
Մելքոնյան Արսեն	- մարզպետարանի ֆինանսական և սոցիալ տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ

2. Հանձնաժողովին՝ ուսումնասիրությունների արդյունքները 10-օրյա ժամկետում ներկայացնել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետին:

17.03.2021

ՄԱՐԶՊԵՏ Գ. ՍԱՆՈՍՅԱՆ

Գ. ՍԱՆՈՍՅԱՆ
ք. Գավառ